2014-2019թթ.

Կալանքից այն կողմ

Ապաստան հայցողների և փախստականների կալանքից հրաժարվելուն միտված՝ կառավարություններին աջակցման գլոբալ ռազմավարություն

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՄԱԿՓԳՀ

Միավորված ազգերի կազմակերպության
փախստականների գերագույն հանձնակատար

Միջազգային պաշտպանության վարչություն
Միավորված ազգերի կազմակերպության
փախստականների գերագույն հանձնակատար
Փոստարկղ 2500
1211 Ժնև 2, Շվեյցարիա

Հեռ՝ +41 22 739 8433

Ֆաքս՝ +41 22 739 7344
Վեբկայք՝ www.unhcr.org

Այս ռազմավարության էլեկտրոնային տարբերակը կարող եք տեսնել՝ www.refworld.org/detention.html Տպագիր օրինակները կարելի է ձեռք բերել, դիմելով Միջազգային պաշտպանության վարչության պաշտպանության քաղաքականության և իրավաբանական խորհրդատվության բաժին, Ժնև, կենտրոնական

Շապիկի երեսի լուսանկարը © ՄԱԿՓԳՀ / Գ. Կոտշի
Շապիկի հետևի լուսանկարը © ՄԱԿՓԳՀ / Վ. Թան

© ՄԱԿՓԳՀ 2014
Ձևավորումը՝ Բաքոս դիզայն

Բովանդակություն

Ինչու՞ է անհրաժեշտ գլոբալ ռազմավարությունը.....5

Ի՞նչ հիմնական մարտահրավերների ու խնդիրների է անդրադառնում գլոբալ ռազմավարությունը.....6

Որո՞նք են գլոբալ ռազմավարության 3 հիմնական նպատակները.....7

Ի՞նչ է հարկավոր անել գլոբալ նպատակներին հասնելու համար.....7

Նախնական մեկնարկը. 2014թ. հունիս-2016թ. հունիս.....8

Գործողությունների ազգային ծրագրերի մշակում.....9

1 Խնդրի վերլուծություն և ախտորոշում.....9

2 Քարոզչական միջամտություններ.....10

3 Իրազեկության բարձրացում և արշավների իրականացում.....11

4 Ներգաղթողների կալանավայրեր մուտքի մատչելիության և մշտադիտարկման ապահովում.....12

5 Տեխնիկական գիտելիքների և համագործակցության տրամադրում/ամրապնդում և կարողությունների ստեղծում բոլոր շահագրգիռ կողմերի համար (վերապատրաստումները ներառյալ).....13

6 Գործընկերության սերտացում 14

7 Տեղեկությունների տրամադրման, տվյալների հավաքման և հաշվետվության խթանում.....14

8 Ներդրումներ հետազոտությունների անցկացման և արդյունքների տարածման համար.....15

9 Ռեսուրսների հատկացում և դրանց առավելագույնս նպատակահարմար օգտագործում….....….....16

10 Մշտադիտարկում և գնահատում.....16

Նպատակներին հասնելը.....17

Նպատակ 1 – Վերացնել երեխաների կալանքը.....17

Նպատակ 2 – Ապահովել կալանավորման այլընտրանքների օրենսդրական ամրագրումը և գործնական կիրառումը…….....19

Նպատակ 3 – Ապահովել կալանքի պայմանների համապատասխանությունը միջազգային չափանիշներին, եթե կալանավորումն անհրաժեշտ և անխուսափելի է.....20

Հավելված. Առկա գործիքները և նյութերը.....22

Ինչու՞ է անհրաժեշտ գլոբալ ռազմավարությունը

Որոշ երկրներում՝ ապօրինի մուտք գործած կամ բնակվող ներգաղթյալների և ապաստան հայցողների կալանավորումը դարձել է ավելի շուտ սովորական, քան բացառիկ գործողություն[1]: Որոշ կառավարություններ կալանքը համարում են իրենց տարածքներ ապօրինի ներգաղթի կամ ապաստանի դիմում ներկայացնելու ապախրախուսման միջոց: Ընդունելով հանդերձ, որ ապօրինի մուտքը կամ երկրում գտնվելը պետությունների համար կարող է մարտահրավերներ ներկայացնել, կալանքը, այնուամենայնիվ, հարցի լուծում չէ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կալանքի նույնիսկ ամենախստացված քաղաքականությունները չեն կանխում ապօրինի ներգաղթը: Մինչդեռ կան կալանքին գործնական այլընտրանքներ, որոնք կարող են օգնել կառավարություններին՝ հաղթահարել անվտանգության և հասարակական կարգուկանոնի խնդիրները և արդյունավետ ընթացք ապահովել ապաստան շնորհելու համար ներկայացված դիմումներին: Կարևոր է հաշվի առնել, որ ապաստանի դիմում ներկայացնելն ապօրինի գործողություն չէ, հետևաբար ապաստան հայցողներին կալանքի ենթարկելը զուտ այն պատճառով, որ մուտք են գործել երկիր առանց նախնական թույլտվության, հակասում է միջազգային օրենքին: Ըստ միջազգային նորմերի, անհատներն ունեն ապաստան հայցելու, և եթե դիմում են դրան՝ մարդկային ու արժանավայել վերաբերմունք ստանալու իրավունք: Բաց ընդունելության կազմակերպումը և կարգավիճակի սահմանման արդարացի ու արդյունավետ ընթացակարգերը պետք է լինեն պետական ընդհանուր գործելակերպի մի մասը:

Կալանքը նաև բազմաթիվ տնական բացասական ազդեցություններ է թողնում անհատների վրա. այն խարխլում է մարդկային արժանապատվությունը և կարող է պատճառել անտեղի տառապանք, որը, հատկապես երկարատև կալանքի դեպքում, լուրջ հետևանքներ կարող է ունենալ նրանց առողջության ու բարօրության վրա: Կալանքը խորացնում է տագնապը, վախը և հուսախաբությունը, կարող է սաստկացնել անցյալի դառն ապրումներով լի փորձը: Սա հաճախ է տեղի ունենում կալանավայրերում, ուր պայմանները չեն համապատասխանում մարդու իրավունքների չափանիշներին: Առանձնապես վտանգավոր է երեխաների կալանքը, ի

[1]Ներգաղթման կալանավայրերում պահվող անձինք կարող են լինել փախստականներ, ապաստան հայցողներ, քաղաքացիություն չունեցող անձինք, թրաֆիքինգի ենթարկված անձինք կամ անկանոն ներգաղթյալներ: ՄԱԿՓԳՀ-ի մանդատը վերաբերում է այս կատեգորիաների միայն մի մասին, սակայն Գրասենյակները պետք է ընկալեն գաղթի առավել լայն համատեքստը: Բացի այս, ՄԱԿՓԳՀ-ի հոգածության առարկա անձանց հանդեպ կիրառվող գործողությունները կարող են դրականորեն անդրադառնալ ներգաղթյալների վրա, հետևաբար խորհուրդ է տրվում համապատասխան դերակատարների հետ հանդես բերել հնարավորինս միասնական մոտեցում: Տես՝ *Note on the Mandate of the High Commissioner for Refugees and his Office*, October 2013, http://www.refworld.org/docid/5268c9474.html

նկատի ունենալով դրա հնարավոր կործանարար ազդեցությունը նրանց ֆիզիկական, էմոցիոնալ և հոգեբանական զարգացման վրա, նույնիսկ այն դեպում, երբ բաժանված չեն իրենց ընտանիքներից: Երեխաները պետք է, որպես սկզբունք, ընդհանրապես չկալանավորվեն: Կալանքը ապաստան հայցողներին կտրում է համայնքից, ինչն էլ երբեմն հենց նպատակ է, զրկելով նրանց գոյություն ունեցող աջակցության կապերից օգտվելու հնարավորություններից (պաշտոնական և ոչ պաշտոնական), նվազեցնելով ազատ արձակվելուց հետո համայնքի անկախ, ինքնաբավ և լիարժեք անդամ լինելու նրանց կարողությունը: Այս բոլոր գործոններն է՛լ ավելի են սրում կալանքի տնողության և հետագա արդյունքի անորոշությունը:

Կալանքի պատճառած դժվարությունների նկատառումով և փախստականների ու մարդու իրավունքների միջազգային օրենքի համաձայն, ապաստան հայցողների ազատազրկումից պետք է հնարավորինս խուսափել, այն կիրառելով միայն որպես վերջին միջոց[2]:

ՄԱԿՓԳՀ-ի՝ Կալանքից այն կողմ. 2014-2019 գլոբալ ռազմավարության նպատակն է ապաստան հայցողների կալանավորումը դարձնել հնարավորինս բացառիկ, այլ ոչ սովորական գործելակերպ:

Ի՞նչ հիմնական մարտահրավերների ու խնդիրների է անդրադառնում գլոբալ ռազմավարությունը

Գլոբալ ռազմավարությունը նպատակ ունի անդրադառնալու կալանքի՝ կառավարության քաղաքականություններին և գործելակերպերին առնչվող որոշ հիմնական մարտահրավերների ու խնդիրների, դրանց թվում՝

- **Թյուր պատկերացումը կալանքի**, դրա դերի ու գործառույթի մասին.
- **Տեղեկացվածության պակասը կալանքի այլընտրանքային ձևերի** առկայության, տեսակների և արդյունավետության մասին.
- **Կալանավորման դեպքերի հաճախացումը** մի շարք երկրներում և/կամ կալանքի ավտոմատ կիրառումը: Կալանքը ենթադրվում է որպես ելակետ ներգաղթի օրենքներում և պետական գործելակերպի մեջ.
- **Կալանքի կիրառումը որպես կանխիչ միջոց**. Կալանքը ոչ միայն չի գործում որպես կանխիչ միջոց, այլև միջազգային օրենքի համաձայն՝ օրինական նպատակ չէ.

[2]Տես՝ ՄԱԿՓԳՀ, *Ուղենիշներ ապաստան հայցողների կալանքի կիրառելի չափանիշների ու չափորոշիչների և կալանքի այլընտրանքների վերաբերյալ* (ՄԱԿՓԳՀ, Ուղենիշներ կալանքի վերաբերյալ*)*, 2012թ., պարբերություն 14, տես՝ http://www.refworld.org/docid/503489533b8.html

- **Հուսալի վիճակագրության պակասը** կալանքի ենթարկված ներգաղթած անձանց թվի և կալանքի տևողության վերաբերյալ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով[3].
- **Մուտքի սահմանափակությունը** (որոշ երկրներում) ներգաղթածների կալանավայրեր և այդ վայրերի հետևողական մշտադիտարկման համար պահանջվող՝ ՄԱԿՓԳՀ-ի և/կամ նրա գործընկերների սահմանափակ կարողությունները.
- **Կալանքի՝ հաճախ անկայուն ու չափանիշներին չհամապատասխանող պայմանները**, այդ թվում հատուկ կարիքներ ունեցող կամ խոցելի վիճակում գտնվող անձանց համար[4]: Կալանքի պայմանները պետք է լինեն մարդկային և արժանավայել:

Որո՞նք են գլոբալ ռազմավարության 3 հիմնական նպատակները

Կառավարությունների և այլ գործընկերների համագործակցությամբ, դրա երեք հիմնական գլոբալ նպատակներն են՝

1 վերացնել երեխաների կալանավորումը[5].

2 ապահովել, որ օրենքում ամրագրվեն և գործնականում կիրառվեն կալանքի այլընտրանքներ.

3 ապահովել, որ կալանքի, եթե այն անհրաժեշտ և անխուսափելի է, պայմանները համապատասխանեն միջազգային չափանիշների, ի թիվս այլ բաների՝ ապահովելով ՄԱԿՓԳՀ-ի և/կամ նրա գործընկերների մուտքը ներգաղթածների կալանավայրեր, և դրանց հետևողական մշտադիտարկումը:

---

[3]Սա չի վերաբերում սոսկ ՄԱԿՓԳՀ-ի համար՝ համապատասխան ազգային փաստաթղթերից օգտվելու հնարավորության սահմանափակությանը, այլ հատկապես պետությունների կողմից տրամադրվող և/կամ հրապարակվող հուսալի և թարմացվող վիճակագրության պակասին: Այնտեղ, ուր կա վիճակագրություն ներգաղթածների կալանավորման մասին, այն ոչ միշտ է դասակագվում ըստ ՄԱԿՓԳՀ-ի խնդրո առարկա կատեգորիաների: Բացի այդ, տարբեր պետությունների՝ կալանքի տևողության հաշվարկները խիստ տարբեր են, ինչը դժվարացնում է համեմատությունը ժամանակի մեջ և ըստ երկրների:

[4]Տես՝ ՄԱԿՓԳՀ , Ուղենիշներ կալանավորման վերաբերյալ 8 և 9

[5]Այս նպատակը հետապնդելիս կարևոր է, որ գրասենյակները և գործընկերները հաշվի առնեն ՄԱԿՓԳՀ-ի Երեխաների պաշտպանության ծրագիրը, 26 հունիսի 2012թ., տես՝ http://www.refworld.org/docid/4fe875682.html

Այս հիմնական նպատակներից յուրաքանչյուրին հասնելու համար կարող է պահանջվել պետական մակարդակով մի շարք նպատակների և ենթանպատակների մշակում, որպեսզի հետագա առաջընթացի հիմքեր ստեղծվեն[6]: Գլոբալ ռազմավարությունը հնարավոր է համարում նաև, որ առանձին երկրներ կամ տարածաշրջաններ կարող են հետապնդել տարբեր կամ հավելյալ նպատակներ, որոնք կարելի է ներառել պետական գործողությունների ծրագրերում:

Ի՞նչ է հարկավոր անել գլոբալ նպատակներին հասնելու համար

Այս նպատակներից յուրաքանչյուրին հասնելու համար ՄԱԿՓԳՀ-ի գրասենյակներն իրենց գործընկերների հետ միասին պետք է մշակեն և իրագործեն Գործողությունների ծրագրեր երկրների և/կամ տարածաշրջանների մակարդակով, ըստ համապատասխանության: Այդպիսի գործողությունների պլանները կարող են բովանդակել հետևյալ տարրերը՝

- խնդրի վերլուծություն և ախտորոշում.
- քարոզչական միջամտություններ.
- իրազեկության բարձրացում և քարոզարշավների անցկացում.
- ներգաղթածների կալանավայրեր մուտքի մատչելիության և մշտադիտարկման ապահովում.
- Տեխնիկական գիտելիքների տրամադրում/հզորացում, համագործակցության ապահովում/ամրապնդում և կարողությունների ստեղծում բոլոր շահագրգիռ կողմերի համար.
- գործընկերության ամրապնդում.
- տեղեկությունների տրամադրման, տվյալների հավաքման և հաշվետվության խթանում.
- ներդրումներ հետազոտական աշխատանքներում, հետազոտությունների իրականացում և դրանց արդյունքների տարածում.
- ռեսուրսների հատկացում և դրանց առավելագույնս նպատակահարմար օգտագործում.
- մշտադիտարկում և գնահատում:

Նախնական մեկնարկը. 2014թ. հունիս-2016թ. հունիս

[6]Տես՝ սույն փաստաթղթի «Նպատակներին հասնելը»

Գլոբալ ռազմավարության նախնական մեկնարկը առաջիկա երկու տարիներին կիրականացվի մի շարք չափանիշների հիման վրա ընտրված 10+ «ֆոկուս» երկրներում: Այդ չափանիշներից են՝ տարածաշրջանային և թեմատիկ բազմազանությունը, խնդրի չափն ու նշանակությունը, մեկնարկի ժամանակահատվածում ազդեցություն ունենալու հավանականությունը (սակայն չվտանգելով հեռանկարային ազդեցությունները), ինչպես նաև աշխատակիցների համալրումն ու ռեսուրսները: Յուրաքանչյուր «ֆոկուս» երկիր պետք է քայլեր ձեռնարկի՝ կառավարությանը ներգրավելու Գլոբալ ռազմավարության և, ըստ հնարավորության, գործողությունների ազգային ծրագրի (տես ստորև) մշակելու գործում: Ենթադրվում է, որ հետագայում կավելանան նոր երկրներ: Ֆոկուս երկրները կօգտվեն Միջազգային պաշտպանության բաժնի լրացուցիչ աջակցությունից:

Մնացած բոլոր երկրներում, ուր կալանքից պաշտպանությունը դժվարին մարտահրավեր է, գրասենյակները պետք է առաջնորդվեն ու հետևեն Գլոբալ ռազմավարությանը, հարմարեցնելով տվյալ երկրի համատեքստին:

Գլոբալ ռազմավարության նախնական մեկնարկի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ http://www.unhcr.org/detention

Գործողությունների ազգային ծրագրերի մշակում

Գործողությունների ազգային ծրագրեր մշակելիս հարկավոր է հաշվի առնել, թե ո՛ր գլոբալ նպատակներն են հետապնդվելու, և սահմանել դրանց համապատասխան խնդիրներ ու գործողություններ[7]: Դրանք պետք է հիմնվեն տվյալ երկրում ներգաղթի և ապաստանի վերաբերյալ գործող օրենսդրության և քաղաքականության վրա:

[7]Նպատակների սահմանումը ներառում է հատուկ, չափելի, հասանելի, իրատեսական և ժամկետային խնդիրների սահմանում (ՍՄԱՐԹ մոդել): Գլոբալ ռազմավարության համատեքստում գրասենյակները կարող են ընտրել մեկ կամ ավելի գլոբալ նպատակներ: Ազգային գործողության ծրագրում սահմանվում/հատկորոշվում են նաև մի խումբ ենթանպատակներ կամ խնդիրներ (որոնք պետք է հասկացվեն որպես առանձին գործողությունների իրականացումից ակնկալվող ցանկալի արդյունք)՝ առաջընթացի և երեք հիմնական նպատակներից մեկին կամ ավելիին հասնելու համար: Յուրաքանչյուր երկրի գործողությունների ծրագրի մասնավոր խնդիրները կամ ենթանպատակները պետք է սահմանվեն՝ ի նկատի ունենալով ազգային համատեքստը և պաշտպանության հատուկ մարտահրավերները, ինչպես նաև առաջընթացի հնարավորությունները: Ենթանպատակների կամ խնդիրների օրինակներ կարելի է գտնել սույն փաստաթղթի «Նպատակերին հասնելը» բաժնում:

Գործողությունների ազգային ծրագրերի խմբագրումը և իրագործումը պետք է լինի թափանցիկ ու ներառական գործընթաց, որին կաջակցեն տեղական շահագրգիռ կողմերը, հատկապես պետական գերատեսչությունները և/կամ օրենքի հարկադրման մարմինները։

Ազգային ծրագրերի առաջնային արդյունքները և ակնկալվող ազդեցությունը պետք է լինեն չափելի՝ ՄԱԿՓԳՀ-ի ՖՈԿՈՒՍ-ում զետեղված Արդյունքների շրջանակային աղյուսակին համապատասխան[8]։

Ազգային (և/կամ տարածաշրջանային ծրագրերը) պետք է մշակվեն գլոբալ նպատակներին հասնելու համար, առաջնորդվելով ստորև առաջարկվող տարրերով/ասպեկտներով։

---

1 Խնդրի վերլուծություն և ախտորոշում

Խնդրին արձագանքելու լավագույն ուղիները սահմանելու համար կարևոր է հասկանալ, թե *ինչու, ում միջոցով* և *ինչպես* է պետությունը կալանքի ենթարկում[9], ինչպես նաև հասկանալ կարգավորող իրավական ու քաղաքական դաշտն ու գործելակերպերը։ Ազգային ծրագրերի մշակման առաջին քայլը հուսալի տեղեկատվությունից[10] օգտվելն է, տեղեկությունների հավաքումն ու տնօրինումը։

Գործողությունների ազգային ծրագրեր մշակելիս, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Ներգաղթի և ապաստանի ընդհանուր համակարգը.
- Ներգաղթածների կալանքի ընդհանուր ռեժիմը.
- Երեխաների պաշտպանության ազգային համակարգը.

---

[8] ՖՈԿՈՒՍԻ շրջանակներում Գլոբալ ռազմավարության նպատակների մշտադիտարկման և հաշվետվության վերաբերյալ կտրվեն լրացուցիչ խորհուրդներ։

[9] Օրինակ, կալանավորման պատճառները կարող են քաղաքական, տնտեսական, անվտանգության և այլ դինամիկա ունենալ։

[10] Տեղեկություններ կարելի է ձեռք բերել մեծ թվով աղբյուրներից։ Սովորաբար առաջին աղբյուրը ազգային իշխանություններն են, սակայն գործընկերներից, հետազոտություններից, մշտադիտարկումից կամ հենց խնդրո առարկա անձանցից ստացված տեղեկությունները ևս խիստ կարևոր են։ Տեղեկատվությունը պետք է ճշտել համեմատությունների հիման վրա և հասկանալ տարբերությունն իմացածի և իբր իմացածի միջև։ Այն դեպքերում, երբ տեղեկությունը դյուրահաս չէ կամ չի տրամադրվում ՄԱԿՓԳՀ-ին կամ նրա գործընկերներին, մշտադիտարկման ռազմավարության և տեղեկությունների հավաքման այլ աշխատանքների մշակումը դառնում է առաջին քայլը։ Ազգային օրենքների և գործելակերպի մասին տեղեկատվության լավ աղբյուր կարող է լինել Կալանքի գլոբալ ծրագիրը, տես՝ http://www.globaldetentionproject.org

- Կառավարության հիմնական մարտահրավերները.
- Առկա ռեսուրսները, շահագրգիռ կողմերը և տեղեկությունների հավաքման ռազմավարությունները, մեխանիզմներն ու գործիքները:

Կալանքի դեմ ուղղված գործողությունները սովորաբար հարկավոր է կապել ապաստանի ընդհանուր համակարգի բարելավմանն ուղղված հասցեական գործողությունների հետ[11]:

Քարոզչական միջամտություններ պլանավորելիս, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Խթանել պաշտպանության առկա գործիքների օգտագործումը և տարածումը, մասնավորապես, ՄԱԿՓԳՀ-ի *«Ուղենիշներ ապաստան հայցողների կալանքի կիրառելի չափանիշների ու չափորոշիչների և կալանքի այլընտրանքների վերաբերյալ»*[12].
- Մեկնաբանել ազգային օրենսդրությունը և քաղաքականությունները, մասնակցել խորհրդարանական կամ կառավարության հարցումներին կամ հանձնաժողովներին, կամ էլ նյութեր ներկայացնել մարդու իրավունքների միջազգային, տարածշրջանային կամ պետական մարմիններին[13].

[11]Օրինակ, բազմաթիվ անձինք տնական կալանքի մեջ են լինում ապաստանի անարդյունավետ համակարգի պատճառով: Ծագման երկիր վերադարձի և վերընդունման ուշացումները ևս կարող են երկարաձգել կալանքը մերժված ապաստան հայցողների համար: Երկու դեպքում էլ պատշաճ կլիներ կալանքին այլընտրանքներ գտնել:

[12]Լրացուցիչ գործիքներ և նյութեր առաջարկված են Հավելվածում: Որպես առաջին քայլ՝ Ուղենիշները պետք է թարգմանվեն ազգային լեզվով/լեզուներով: Նպատակահարմար կլիներ Ուղենիշները թարգմանել խնդրո առարկա անձանց հիմնական լեզուներով:

[13] Գրասենյակները կարող են մտածել Միավորված ազգերի կազմակերպության կամ մարդու իրավունքների այլ մեխանիզմների հետ գործակցելու մասին, ինչպիսիք են Գաղթականների մարդու իրավունքների հատուկ զեկուցողը, Կտտանքների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարմունքի կամ պատժի հատուկ զեկուցողը, Միայնակ բանտարկության հատուկ զեկուցողը կամ այլ հատուկ ընթացակարգեր, ինչպիսիք են Կամայական կալանքի աշխատանքային խումբը, մարդու իրավունքների տարածաշրջանային մեխանիզմները, եթե դրանք կան:

- Երկխոսություն հաստատել կառավարությունների հետ, այդ թվում ծանոթացնելով այլ կառավարությունների հետ ունեցած դրական փորձին և ստեղծելով աշխատանքային խմբեր[14].
- Կառավարություններին ուղղված քարոզչության մեջ շոշափել կառավարությունների շահերը և օգտագործել գործնական ուղերձներ, այլ ոչ թե սոսկ իրավունքներից բխող փաստարկներ[15].
- Պատրաստել և տարածել հաշվետվություններ ներգաղթածների կալանքի[16] վերաբերյալ (կապելով նաև մշտադիտարկման և հետազոտությունների հետ).
- Աջակցություն ցուցաբերել մի շարք շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ոչ ավանդական գործընկերներին, ինչպիսիք են մարդու իրավունքների ազգային հաստատությունները[17].
- Ստեղծել ազգային կամ տեղական/մարզային խորհրդակցական կամ քարոզչական խմբեր.
- Գտնել տարածաշրջանային քարոզչության և տարածաշրջանային ցանցերի ստեղծման հնարավորություններ.
- Գործակցել դատական և իրավաբանական համայնքի հետ: Քննության առնել, թե արդյոք, և ինչպես, կարելի է դատաքննությունը ներառել գործողությունների ազգային ծրագրում: Աշխատանքները կարող են ներառել համապատասխան օրենքին հետևելը՝ նախադեպեր ստեղծող դեպքերի արձանագրումը դատական միջամտություններում օգտագործելու համար (լինի ՄԱԿՓԳՀ-ի ուղղակի միջամտությունների, թե ՀԿ-ներին կամ այլ գործընկերներին աջակցության ձևով) և կալանքի հարցերում իրավաբանական համայնքի ավելի լայն ներգրավման խրախուսումն ազգային, տարածաշրջանային և/կամ միջազգային մակարդակներում:

---

[14]Տես, օրինակ՝ ՄԱԿՓԳՀ-ի հովանավորությամբ անցկացված Կանադա/ԱՄՆ երկպետական կլոր սեղան՝ նվիրված ապաստան հայցողների, փախստականների, գաղթականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար կալանքի այլընտրանքներին, փետրվար, 2013թ., http://goo.gl/PWNDhk և ՄԱԿՓԳՀ, Գլոբալ կլոր սեղան՝ նվիրված ապաստան հայցողների, փախստականների, գաղթականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար կալանքի այլընտրանքներին. Ամփոփ եզրակացություններ, 2011թ. հուլիս, http://www.refworld.org/docid/4e315b882.html

[15] Նման ուղերձները կարող են լինել, օրինակ, կալանքի՝ որպես կանխման միջոցի անարդյունավետությունը, կալանքի ծախսը համեմատած կալանքի այլընտրանքների ծախսի հետ և այլն:

[16] Տես, օրինակ՝ ՄԱԿՓԳՀ-ի դիրքորոշումը Մալթայում ապաստան հայցողների կալանքի հարցում, 18 սեպտեմբեր, 2013թ., http://www.refworld.org/docid/52498c424.html

[17] Ներառյալ այն պետությունների կանխարգելման ազգային մեխանիզմները, որոնք ստորագրել են Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (2002), տես՝ http://goo.gl/qwfkIr

2. Քարոզչական միջամտություններ

Քարոզչությունը ազգային գործողությունների ցանկացած ծրագրի էական տարրն է: Քարոզել՝ նշանակում է ներգործել որոշումների ընդունման գործընթացների վրա տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում[18]: Քարոզչությունը կարող է արվել բազմաթիվ ձևերով, որոնցից են կոալիցիաների և միությունների ձևավորումը, հետազոտությունները և հրապարակումները, խորհրդաժողովներն ու միջոցառումները, հաղորդակցությունը և աշխատանքը լրատվամիջոցների հետ, հանրային քարոզարշավների կազմակերպումը, համատեղ ուղերձները և սոցիալական մոբիլիզացումը, դատաքննությունը: Լավ ծրագրված քարոզչական միջամտությունները կարող են փոխել մարդկանց վերաբերմունքը, հանգեցնելով քաղաքականության և/կամ գործելակերպի դրական փոփոխությունների:

Այս նպատակի համար, սակայն, շատ կարևոր է քարոզչական գործունեության տեսակի մշակումը: Այն պետք է հարմարեցվի տվյալ լսարանին կամ համատեքստին (օրինակ, խորհրդարան, գործադիր, դատաքննչական մարմինների անդամներ, ընդհանուր հանրություն և այլն)[19]: Այս համատեքստում շատ մեծ նշանակություն ունի գործընկերությունը, առավելագույնս պետք է գործի դրվեն համալրող դերակատարությունները, մանդատները, փորձագիտական կարողությունները և մասնակից գործընկերների ու շահագրգիռ կողմերի հարաբերությունները/ցանցերը: Քարոզչությունը պետք է հիմնվի փաստերի վրա, ուստի շատ կարևոր են կալանքի համատեքստի իրավական ու գործնական հիմնավոր վերլուծությունը, կալանքի ենթարկման պատճառների ըմբռնումը, համապատասխան դերակատարների ընդգրկումը, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման առաջընթացի մեխանիզմի առկայությունը (Տես ստորև՝ կետ 10, Մշտադիտարկում և գնահատում):

3 Իրազեկության բարձրացում և քարոզարշավների իրականացում

[18] Տես՝ ՄԱԿՓԳՀ, Ուղենիշային գրառումները պաշտպանության քարոզչության գործընկերության մասին, ընդհանուր փաստաթուղթ, պատրաստված ՀԿ-ների հետ ՄԱԿՓԳՀ-ի ամենամյա խորհրդակցության համար, 2013թ. հունիս.՝ http://goo.gl/Px8kiQ

[19]Օրինակ, եթե կալանքը հատուկ օրենքների կամ քաղաքականությունների արդյունք է, քարոզչությունը պետք է նպատակաուղղվի համակարգային խնդիրների շտկմանը՝ օրենքի կամ կանոնակարգերի փոփոխությունների կամ վարչական գործելակերպի փոփոխման միջոցով:

Գլոբալ նպատակներին հասնելու համար հանրության աջակցության ապահովումը կարող է հանգեցնել հանրային կարծիքի փոփոխությունների, ինչպես նաև օրենսդրական և այլ անհրաժեշտ փոփոխությունների: Բազմաթիվ համատեքստերում այն կարող է դառնալ ազգային գործողությունների ծրագրի ամենակարևոր մասը: Նպատակահարմար կարող է լինել գլոբալ ռազմավարությանն առնչվող հաղորդակցության ռազմավարությունը ազգային և/կամ տարածաշրջանային մակարդակներում: Ուղերձները պետք է լինեն հստակ, կանոնավոր և հասնեն հասցեագիր լսարանին:

Որոշումներ պետք է ընդունվեն հաղորդակցության ցանկացած մոտեցման վերաբերյալ: Օրինակ՝ կենտրոնանալ խնդրո առարկա անձանց համար կալանքի պրակտիկայի բացասական ազդեցության վրա, թե՞ առաջադրել կալանքի չդիմելու քաղաքականության հիմնավոր պատճառներ, կամ միգուցե համատեղե՞լ բացասական ու դրական ուղերձները: Կալանքը կարող է լինել պաշտպանության ընդհանուր միջավայրի առավել ծավալուն հաղորդակցության միայն մի մասը: Հանրությանն իրազեկող քարոզարշավի խնդիրը տեղեկացնելն է և փոփոխություն խթանելը, ինչին կարելի է հասնել լրատվամիջոցների մի շարք տեսակներով (տպագիր, ռադիո, հեռուստացույց, վեբկայքեր, սոցիալական ցանցեր և այլն): Կարող է արդյունավետ լինել կալանքի իրավիճակում հայտնված մարդկանց ներգրավումը քարոզարշավում: Շատ կարևոր է խնդիրը տեսանելի պահելը:

Իրազեկության բարձրացման և քարոզարշավների անցկացման ժամանակ պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Մշակել և իրականացնել հաղորդակցության ռազմավարություն /քարոզարշավ լրատվամիջոցներով, կամ կալանքի վերաբերյալ ուղերձները ներառել պաշտպանության առավել ծավալուն հաղորդակցության մեջ.
- Մշակել հետևողական ուղերձներ.
- Պլանավորել ճանաչված մարդկանց բարձր մակարդակով այցելություններ՝ ներառյալ կալանավայրեր կամ կալանքի այլընտրանքներ.
- Միանալ կամ խրախուսել տեղական և/կամ ազգային քարոզարշավների անցկացումը, դրանց թվում՝ Գլոբալ ռազմավարության ազգային քարոզարշավների մեկնարկները, միաժամանակ հաշվի առնելով ռիսկերը[20]:

[20]Տես՝ օրինակ, Ներգաղթելիս երեխաների կալանավորումը վերացնելու Գլոբալ քարոզարշավը, որը համակարգում է Կալանքի միջազգային դաշինքը, http://www.endchilddetention.org

4 Ներգաղթողների կալանավայրեր մուտքի մատչելիության և մշտադիտարկման ապահովում

Կալանավայրերի մշտադիտարկումը կարևոր գործ է և կազմում է ՄԱԿՓԳՀ-ի վերահսկիչ պարտավորությունների մի մասը[21]: Մշտադիտարկումը նկարագրում է ժամանակի ընթացքում անցկացվող, նախօրոք հայտարարված կամ առանց դրա, պարբերական կամ կանոնավոր քննության գործընթացը՝ ներգաղթածների կալանավայրեր կատարած ուղղակի այցելությունների միջոցով:

Մշտադիտարկումը կարող է նպաստել՝ կանխելու մարդու իրավունքների խախտումները անհատական կամ համակարգային մակարդակում և բարելավել կալանքի պայմանները: Մշտադիտարկումը կարող է նաև դեր խաղալ կառավարություններին ՄԱԿՓԳՀ-ի պաշտպանության մանդատի վերաբերյալ զգաստացնելու գործում:

Մշտադիտարկումը գործիք է իշխանության իրավասու մարմինների հետ երկխոսություն սկսելու համար: Գրասենյակներին առաջարկվում է մշակել մշտադիտարկման ծրագիր, օգտվելով «Ներգաղթածների կալանավայրերի մշտադիտարկում. գործնական ձեռնարկում»[22] ամփոփված հնարներից ու մեթոդաբանությունից:

Մշտադիտարկման ծրագիր մշակելիս, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Եթե մուտքի թույլտվությունը դեռևս համաձայնեցված չէ կառավարության հետ, բանակցել ներգաղթածների կալանավայրեր անարգել մուտք գործելու համար.
- Կազմել ժամանակացույց. Սահմանել մշտադիտարկման ծրագրի ընդհանուր ժամանակացույց.
- Լինել կառուցողական.
- Ծրագրել և անցկացնել մշտադիտարկման այցելություններ. Սահմանել մշտադիտարկման հստակ նպատակներ ու խնդիրներ.
- Որոշել և օժանդակել այլ մարմինների այցելություններին.
- Սահմանել մշտադիտարկման այցերին հաջորդող անելիքները:

---

[21]Տես՝ ՄԱԿՓԳՀ, գրառումներ Փախստականի գերագույն հանձնակատարի մանդատի և նրա գրասենյակի վերաբերյալ, հոկտեմբեր, 2013թ., http://www.refworld.org/docid/5268c9474.html

[22]ՄԱԿՓԳՀ, Կտտանքների կանխարգելման միություն (ԿԿՄ) և Կալանքի միջազգային դաշնություն (ԿՄԴ), Ներգաղթածների կալանքի մշտադիտարկում. գործնական ձեռնարկ, 2014թ., տես՝ http://www.refworld.org/docid/53706e354.html

5. Տեխնիկական գիտելիքների և համագործակցության տրամադրում/ամրապնդում և կարողությունների ստեղծում բոլոր շահագրգիռ կողմերի համար (վերապատրաստումները ներառյալ)

Կարողությունների զարգացման աշխատանքները գործողությունների ազգային ծրագրերի էական բաղադրիչն են: Դրանք կարող են կենտրոնանալ փորձագիտական ասպեկտների, ինչպես օրինակ, կառավարության՝ կալանավայրերի կառավարման կարողությունների ուժեղացման, կամ կալանքից դուրս այլընտրանքներ ներդնելուն օժանդակելու վրա: Դրանք կարող են կենտրոնանալ նաև գիտելիքների խթանման վրա՝ օրինակ ներգաղթածների կալանքին առնչվող՝ փախստականների և մարդու իրավունքների միջազգային չափանիշների վերաբերյալ: Այս աշխատանքների հիմնական նպատակն է՝ ստեղծել կամ խթանել գլոբալ նպատակներին հասնելու կարողությունները: Սա կարող է լինել, օրինակ, կարճաժամկետ կամ հեռանկարային նախաձեռնությունների մշակում՝ ուղղված գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների կամ կառավարման փորձագիտական իմացության զարգացմանը:

Վերապատրաստման և կարողությունների ստեղծման աշխատանքներն ու գործիքները[23] կարող են ուղղվել դերակատարների լայն շրջանակի՝ ներառելով կառավարությունների, ինչպես նաև գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի (ՀԿ-ներ, քաղաքացիական հասարակություն, գիտական շրջանակներ, իրավաբանական օժանդակություն ցուցաբերողներ և այլն): ՀԿ գործընկերներին, ինչպիսիք են Կալանքի միջազգային դաշինքը (ԿՄԴ) և Կտտանքների կանխման միությունը (ԿԿՄ), կարելի է նաև դիմել առանձին կամ համատեղ վերապատրաստումներ անցկացնելու համար: Բացի այդ, այլ երկրների պետական փորձագետներ կարող են դրական փորձի փոխանակման ցանկություն հայտնել: Գրասենյակներին առաջարկվում է անց կացնել հետազոտություններ՝ գոյություն ունեցող կարողությունների զարգացման նախաձեռնությունների կամ ծրագրերի ոլորտում և մշակել սիներգիաներ[24]:

Կարողությունների զարգացման նախաձեռնություններ ծրագրելիս, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Գործողությունները մշակել կարողությունների և կարիքների վերլուծության հիման վրա.

[23] Տես Հավելվածը, ուր տրված են գոյություն ունեցող գործիքներն ու ծրագրերը, որ կարող են օգնել կարողությունների զարգացման գործողությունների մշակմանն ու իրականացմանը:

[24] Տես՝օրինակ, Կալանքի այլընտրանքների իրականացումը Եվրոպայում՝ փոխանակությունների, քարոզչության և ուսանելու միջոցով (ծրագիր «Իրականություն դարձրած»), Ոդիսևսի ցանց, http://www.ulb.ac.be/assoc/odysseus/MADEREALuk.html

- Մշակել վերապատրաստման և կարողությունների զարգացման համատեղ նախաձեռնություններ, հնարավորության դեպքում՝ կառավարական և այլ գործընկերների հետ.
- Խթանել կալանքի և կալանքին այլընտրանքների վերաբերյալ երկխոսություններ/կլոր սեղաններ/ծրագրեր կառավարության ներսում[25].
- Ծանոթանալ հաջողված/դրական գործելակերպերի, վիճակագրության, կալանքի արդյունավետ ռազմավարությունների, մշտադիտարկման գործիքների և այլն.
- Տեխնիկական գիտելիքներով աջակցել կալանքին այլընտրանքների փորձնական ծրագրերի մշակմանը.
- Կազմակերպել սեմինարներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ.
- Հաշվի առնել աշխատակիցներին գործուղելու նպատակահարմարությունը՝ իշխանությունների հետ ուղղակիորեն աշխատելու համար[26]:

6 Գործընկերության ուժեղացում

Գործընկերությունների ձևավորումը և ուժեղացումը հիմնարար նշանակություն ունի գլոբալ նպատակներին հասնելու համար[27]: Գործընկերությունները բազմապատկում են ծրագրած զանազան աշխատանքների արդյունավետությունը և ազդեցությունը՝ լրացուցիչ կամ այլ տեխնիկական գիտելիք տրամադրելու, հմտությունների բազմազանության, ռեսուրսների և քաղաքական իրազեկության ավելացման միջոցով:

Հարմար գործընկերներ ընտրելը շատ կարևոր քայլ է գործընթացում: Գործընկերներ կարող են լինել քաղաքացիական հասարակությունը, ազգային ու միջազգային ՀԿ-ները, մարդու իրավունքների ազգային կոմիտեներն ու հաստատությունները (և մարդու իրավունքների մշտադիտարկման այլ մեխանիզմներ), գիտական շրջանակները, ինչպես նաև պետական մարմինները: Կարևոր է հասկանալ այն մասնավոր փորձագիտական կարողությունները, որ յուրաքանչյուր գործընկեր կարող է տրամադրել նպատակներին հասնելու համար: Դրանք

[25] Հետագա ծանոթության համար, տես՝ Կլոր սեղաններ կալանքի այլընտրանքների վերաբերյալ, http://www.refworld.org/detention.html

[26] Նման գործուղումները կարող են անցկացվել, օրինակ, կառավարական մարմինների հետ նույն վայրում՝ ներառյալ կալանավայրերում:

[27] Հետագա ծանոթության համար՝ ՄԱԿՓԳՀ, Փախստականների զերագույն հանձնակատարի կառուցիկ երկխոսությունը ՀԿ-Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիա-ՄԱԿՓԳՀ գործընկերության վերաբերյալ. նախաձեռնություն՝ ուղղված ՄԱԿՓԳՀ-ի և ՀԿ-ների գործընկերության բարելավմանը 2012թ. և դրանից հետո, հունվար 2013թ., տես՝ http://www.refworld.org/docid/51751fb14.html

սահմանվում են ըստ նրանց մանդատների, առաքելությունների և օրակարգերի։ Հմտությունների, փորձի և մասնավոր դերերի կոմպլեմենտարությունն ապահովելու համար շատ կարևոր է հասկանալ միմյանց մանդատները, խնդիրները և յուրահատուկ դերերը, ինչպես նաև դրանց հետագա հնարավոր ազդեցությունը հյուրընկալող կառավարությունների, տուժած բնակչությունների և համայնքների հետ հարաբերությունների վրա։

Գործընկերություններն ուժեղացնելիս, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Օգնության հասնել և քարտեզագրել գոյություն ունեցող գործընկերներին ու նրանց մասնավոր փորձառությունը՝ ազգային, տարածաշրջանային ու գլոբալ մակարդակներում. Շահագրգիռ կողմերին ներգրավել քարտեզագրման աշխատանքներում[28].
- Սահմանել համատեղ միջամտությունների կարևոր ոլորտները.
- Ապահովել խորհրդատվության և տեղեկությունների փոխանակում համապատասխան դերակատարների միջև՝ առաջնորդվելով տվյալների պաշտպանության սկզբունքներով.
- Ընդունել շահագրգիռ կողմերի միջև դերերի, գիտելիքների և հարաբերությունների կոմպլեմենտարությունը՝ ապաստան հայցողների մասնավոր կարիքներին արձագանքելու գործում։

---

7 Տեղեկությունների տրամադրման, տվյալների հավաքման և հաշվետվության խթանում

Քաղաքականությունների և գործելակերպերի վերաբերյալ ճշգրիտ և թարմ տեղեկատվությունը, այդ թվում վիճակագրական տվյալները, կարևոր նշանակություն ունեն պետությունների հետ գործակցելու համար։ Հարկավոր է ստեղծել տվյալների համար դիմելու, ինչպես նաև այդ տվյալների հավաքման և տրամադրման թափանցիկ մեխանիզմներ։

Տեղեկատվության աղբյուրները տարբեր են՝ կախված համատեքստից։ Պաշտոնական աղբյուրները, այդ թվում վիճակագրությունը և հաշվետվություններն առանձնապես կարևոր

[28] Կալանքի ոլորտի փորձագիտական հատուկ իմացությամբ գործընկերները, որոնց կարելի է դիմել, հետևյալն են՝ Կալանքի միջազգային դաշինքը (ԿՄԴ), որի հետ ՄԱԿՓԳՀ-ն հուշագիր է ստորագրել 2013թ. (տե՛ս Հավելվածը հետագա ծանոթացման համար), Կտտանքների կանխարգելման միությունը (ԿԿՄ), Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ), Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ), ինչպես նաև ՄԱԿ-ի այլ գործակալություններ՝Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը, Մանկական հիմնադրամը, Թմրանյութերի և հանցագործության հարցերով գրասենյակը։ Միջամտություններ ծրագրելիս, կարելի է ներգրավել նաև ազգային և տարածաշրջանային մակարդակներում գործող համապատասխան ՀԿ-ներ կամ մարդու իրավունքների տարածաշրջանային և ազգային հաստատություններ։

են, եթե դրանք կան: Սակայն դրանք հարկավոր է ճշտել՝ համեմատելով այլ առկա աղբյուրների հետ, հետևողականություն և հուսալիություն ապահովելու համար:

Տեղեկությունների տրամադրման, տվյալների հավաքման և հաշվետվության խթանման ժամանակ, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ հավաքել, վերլուծել, տրամադրել և տարածել տեղեկություններ (այդ թվում մամուլի հաղորդագրություններ և սոցիալական լրատվամիջոցներ՝ ըստ համապատասխանության) կալանքի կամ կալանքին այլընտրանքների և տեղաշարժի ազատության վերաբերյալ.
- Ստեղծել կալանքի ֆոկուս անձանց ցանց երկրի և/կամ տարածաշրջանային մակարդակում՝ համակարգելով գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի հիմնած ցանցերի հետ.
- Հավաքել և թարմ տեղեկություններ ունենալ կալանքի գործելակերպերի և կալանքին այլընտրանքների վերաբերյալ՝ երկրի և/կամ տարածաշրջանի մակարդակով[29].
- Ուսումնասիրել ակադեմիական հաստատությունների հետ գործընկերության հնարավորությունները, մասնավորապես հետազոտությունների համար.
- Օժանդակել, ըստ համապատասխանության, տեղական մշտադիտարկող կազմակերպություններին /մարմիններին /ցանցերին:

---

8. Ներդրումներ հետազոտությունների անցկացման և արդյունքների տարածման համար

Հետազոտությունները կարող են օգնել պաշտպանության հիմնական բացերն ու մարտահրավերները սահմանելու, ինչպես նաև հնարամիտ քաղաքականություն և գործնական լուծումներ գտնելու համար: Մասնավորապես, կալանքին այլընտրանքների վերաբերյալ հետազոտությունները ծառայել են որպես կարևոր միջոց՝ դրանց մասին փորձառական վկայությունների հիմք ստեղծելու համար:

Հետազոտությունները կարող են անցկացնել լայն շրջանակի դերակատարներ՝ կառավարական և ոչ կառավարական, այդ թվում գիտական շրջանակներ և ազգային ու միջազգային ՀԿ-ներ: ՄԱԿՓԳՀ-ը նույնպես հետազոտություններ է անցկացնում, ինչպես նաև

[29] Տես՝ օրինակ, Կալանքի գլոբալ ծրագիրը, http://www.globaldetentionproject.org և Կալանքի միջազգային դաշինքը, http://www.idcoalition.org Տես նաև՝ ՄԱԿՓԳՀ-ի Refworld special features-ի կալանքի էջը, http://www.refworld.org/detention.html

խրախուսում է հետազոտությունների անցկացումը և դրանց արդյունքների տարածումն այլոց կողմից[30]:

Հետազոտությունների անցկացման և արդյունքների տարածման ժամանակ պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Սահմանել, խթանել և աջակցություն տրամադրել (այդ թվում ֆինանսական) հետազոտական նախաձեռնություններին և հնարավորություններին՝ գլոբալ, տարածաշրջանային և/կամ երկրի մակարդակներում, որոնք կօգնեն ավելի լավ պատկերացում տալ կալանքի համատեքստի, գործելակերպերի և դիպվածային օրենքի վերաբերյալ և կնպաստեն կալանքի խնդիրներին ու մարտահրավերներին ստեղծագործ լուծումներ գտնելու.
- Գործընկերություն հաստատել ուսումնասիրություններ կատարող ակադեմիական և այլ հետազոտական հաստատությունների հետ (այդ թվում ազգային/կառավարական հաստատությունների, ինչպիսիք են մարդու իրավունքների ազգային հանձնաժողովները, օմբուդսմենները կամ համարժեք մեխանիզմները).
- Խթանել հուշագրերի կամ համանման համաձայնագրերի ստորագրումը՝ հետազոտությունների ոլորտում երկարաժամկետ համագործակցությունը ինստիտուցիոնալացնելու համար. կամ այլ կերպ օժանդակել հետազոտական ծրագրերի իրականացմանը (ֆինանսավորելով, միաժամանակ մասնակցելով կազմակերպական հանձնաժողովների և/կամ գրելով աջակցության նամակներ).
- Տարածել հետազոտությունների արդյունքները՝ հնարավորինս լայն ազդեցություն ապահովելու համար:

9 Ռեսուրսների հատկացում և դրանց առավելագույնս նպատակահարմար օգտագործում

[30] Տես՝ օրինակ, Վերադարձ հիմնական հարցերին. անձանց ազատության և անվտանգության իրավունքը և փախստականների, ապաստան հայցողների, քաղաքացիություն չունեցող անձանց և այլ միգրանտների «Կալանքին այլընտրանքները», Ալիս Էդվարդս, ապրիլ 2011թ., PPLA/2011/01.Rev.1, http://www.refworld.org/docid/4dc935fd2.html և Էմպիրիկ հետազոտության ներկառուցումը կալանքի այլընտրանքներում. ապաստան հայցողների և փախստականների ընկալումները Տորոնտոյում և Ժնևում, Կատրին Կոստելլո և Էսրա Կայտազ, 2013թ. հունիս, PPLA/2013/02, տես՝ http://www.refworld.org/docid/51a6fec84.html

Գլոբալ ռազմավարության հաջող իրականացման համար հարկավոր է ապահովել պատշաճ ֆինանսավորում և աշխատակազմ (երկրի և գրասենյակի ֆոկուս անձինք)։ Այս ռեսուրսների մի մասը ՄԱԿՓԳՀ-ն արդեն կարող է ստանալ՝ տվյալ երկրում իրականացվող գործունեության ծրագրի համաձայն կամ ձեռք բերել գործընկերների միջոցով։ Այս նախաձեռնությունները կօգնեն ծածկել Գլոբալ ռազմավարության ծախսերի մի մասը, սակայն հարկ կլինի ուսումնասիրել այլ աղբյուրներ, ներառյալ մասնավոր և հանրային հատվածների ֆոնդերը։

---

10 Մշտադիտարկում և գնահատում

Գլոբալ նպատակներին հասնելու համար իրականացվող գործողությունների և առաջընթացի մշտադիտարկման միջոցները պետք է սահմանեն գրասենյակները՝ գործողությունների ազգային ծրագրեր մշակելիս։ Հետևողական գնահատումը հնարավորություն է տալիս անհրաժեշտ տեղեկություններ ստանալ շարունակական բարելավումների և նպատակներին հասնելու համար։

Մշտադիտարկում և գնահատում ծրագրելիս, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

- Սահմանել նախնական/բազային տվյալները, որոնց հիման վրա չափվելու է առաջընթացը.
- Ուսումնասիրել տեղական աշխատանքային խմբեր հիմնելու հնարավորությունը (գործընկերների միջոցով)՝ առաջընթացը մշտադիտարկելու համար.
- Նպաստել գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ պարբերական հանդիպումներին՝ առաջընթացը և/կամ նպատակներին հասնելու այլընտրանքային միջոցները քննարկելու համար.
- Պատրաստել հաշվետվություններ, մշակել գործիքներ և հաշվետվության այլ մեխանիզմներ՝ ըստ համապատասխանության.
- Խթանել այլ գրասենյակների միջև ընթացիկ հաշվետվությունների տարածումը՝ դրական գործելակերպերը ի հայտ բերելու և դրանց ծանոթանալու, ինչպես նաև կարծիքներ ներկայացնելու համար։

10+ ֆոկուս երկրները կպարտավորվեն երկու տարի հետո ներկայացնել ընթացիկ զեկույց, իսկ հինգ տարուց՝ վերջնական զեկույց, այդ երկուսն այնուհետև միավորելով մի ընդհանուր գլոբալ զեկույցում՝ երկու փուլերով։

Նպատակներին հասնելը

Նպատակ 1. Վերացնել երեխաների կալանքը

Նպատակ 1-ը հետապնդելիս կարևոր է, որ գրասենյակները և գործընկերները հաշվի առնեն ՄԱԿՓԳՀ-ի *Երեխաների պաշտպանության ծրագիրը*[31]:

Ի՞նչին անդրադառնալ:

Ենթանպատակները կամ խնդիրները պետք է ներառեն հետևյալը.

1 **Օրենսդրական և քաղաքականության ծրագրերն ապահովում են, որ երեխաները կալանքի չենթարկվեն**, բացառությամբ առանձնահատուկ դեպքերի, երբ կալանքն օգտագործվում է որպես վերջին միջոց, օրինական պատճառով և հնարավորինս կարճ ժամկետով.

2 Գերակայում է երեխայի առավելագույն շահը[32] -Առաջնահերթություն է համարվում ապաստանի հայցի գործընթացն սկսելը և/կամ ընտանիքը գտնելը/վերամիավորումը: Տրամադրվում է տարիքին համապատասխան տեղեկատվություն (օրինակ, նկարազարդ գրքեր)՝ ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ (այդ թվում, ինչպես դիմել ՄԱԿՓԳՀ). երեխաների համար նշանակվում են խնամակալներ և/կամ իրավաբանական ներկայացուցիչներ, հատկապես, եթե նրանք չունեն ուղեկցող կամ անջատված են ընտանիքից.

3 Այլընտրանային ընդունման/խնամքի կազմակերպումը (ընտանիքների համար ներառյալ) հնարավոր է ու պատշաճ – դրա օրինակներ են խնամակալությունը, համայնքի կողմից հսկողությունը/աջակցությունը, տարիքին համապատասխան, պատշաճ հսկողությամբ բաց ընդունման կենտրոնները և այլն.

4 Երեխաների նրբազգաց քննություն և ուղղորդման գործընթացների առկայություն՝ առանց ուշացման նրանց երեխաների պաշտպանության հաստատություններ կամ կազմակերպություններ ուղարկելու համար, ապահովելով անհրաժեշտ ծառայությունների և օժանդակության տրամադրում (օրինակ, Առավելագույն շահի գնահատման կամ սահմանման գործընթացների և խնամքի կազմակերպման միջոցով).

---

[31]ՄԱԿՓԳՀ, Երեխաների պաշտպանության ծրագիր, 26 հունիսի 2012թ., տես՝ http://www.refworld.org/docid/4fe875682.html

[32] Տես՝ մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան երեխայի իրավունքների մասին, հոդվածներ 3 և 22: Տես նաև՝ ՄԱԿՓԳՀ, Ուղենիշներ երեխայի առավելագույն շահը սահմանելու վերաբերյալ, 2008թ. մայիս, http://www.refworld.org/docid/48480c342.html և ՄԱԿՓԳՀ, Դաշտային ձեռնարկ ՄԱԿՓԳՀ, Առավելագույն շահը սահմանելու ուղենիշների իրականացման վերաբերյալ, http://www.refworld.org/docid/4e4a57d02.html

5 Երեխաների անհապաղ ազատումը կալանքից և տեղավորումն այլ պատշաճ պայմաններում համակարգվում է ազգային մարմինների միջև և ՄԱԿՓԳՀ-ի հետ՝ ըստ պատշաճի։

Ի՞նչ գործողություններ կարելի է ձեռնարկել

- Քարտեզագրել երեխաների կալանքի պայմանները.
- Ստուգել այդ պրակտիկայի պատճառները, և թե ինչ կարելի էր անել փոխարենը
- Որոշել ամենահամապատասխան շահագրգիռ կողմերին՝ նրանց հետ աշխատելու համար.
- Ապահովել մուտքը կալանավորված երեխաների մոտ.
- Ապահովել իրավաբանական աջակցության մատչելիությունը.
- Մշտադիտարկել կալանքի պայմանները.
- Որոշել, թե որոնք են երեխաների իրավունքներին սատարող գործող օրենքները, նախաձեռնությունները կամ ռազմավարությունները.
- Մշակել մի շարք քարոզչական միջամտություններ.
- Բարձրացնել իրազեկությունը երեխաների բարօրության և առողջության վրա կալանքի ունեցած վնասակար հետևանքների վերաբերյալ.
- Բարձրացնել իրազեկությունը, մշակել լրատվամիջոցների քարոզարշավ և ընդհանուր հաղորդակցության ռազմավարություն, ապահովել հաղորդակցման հետևողական կորպորատիվ ուղերձներ.
- Տրամադրել/օժանդակել վերապատրաստման և կարողությունների ստեղծման աշխատանքները.
- Ստուգել և խթանել ընդունման ու խնամքի կազմակերպման այլընտրանքները։ Առաջնահերթությունը պետք է տրվի ընտանեկան խնամքի կազմակերպմանը.
- Խթանել երեխաների կալանքի այլընտրանքներին նվիրված հետազոտությունները, ուսումնասիրությունները, զեկույցները և դրանց արդյունքների տարածումը.
- Կառավարությունների հետ անցկացնել կլոր սեղաններ/երկխոսություններ և ծանոթացնել դրական գործելակերպերին։ Ուսումնասիրել, թե ինչպես կարող են դրանք հետաքրքրել/հարմարեցվել ազգային համատեքստում։

Նպատակ 2. Ապահովել կալանավորման այլընտրանքների օրենսդրական ամրագրումը և գործնական կիրառումը

Ինչի՞ն անդրադառնալ։

Ենթանպատակները կամ խնդիրները պետք է ներառեն հետևյալը.

1 Օրենսդրական շրջանակները և քաղաքականությունը ներառում են այլընտրանքներ ներգաղթածների կալանքին.

2 Առկա են ընթացակարգեր՝ ամեն առանձին դեպքում կալանքի անհրաժեշտությունը, հիմնավոր լինելը և դրա համամասությունը գնահատելու և քննելու համար.

3 Գոյություն ունեն մեթոդական ուսումնասիրման և ուղղորդման մեխանիզմներ՝ ապաստան հայցողների նկատմամբ կալանքին այլընտրանքների կիրառումն ապահովելու համար.

4 Առկա են կալանքին մի շարք այլընտրանքներ (օրինակ, սկսած պայմանների մասին հաշվետվությունից մինչև տեղավորումը համայնքներում).

5 Կալանքին այլընտրանք հանդիսացող ձևերում **հաշվի են առնված մարդկանց հատուկ կարիքները կամ խոցելիությունը**: Համայնքներում ընդունման կազմակերպումը համարվում է առաջնահերթ, հատկապես երեխաների և ընտանիքների համար:

Ի՞նչ գործողություններ կարելի է ձեռնարկել

- Հետազոտել, փաստագրել և քարտեզագրել կալանքին այլընտրանքների դրական գործելակերպերը.
- Տրամադրել շահագրգիռ կողմերին և լայն հասարակությանը, ըստ պատշաճի, տեղեկություններ կալանքին այլընտրանքների վերաբերյալ.
- Գտնել կալանքին այլընտրանքների օժանդակության փաստական հիմնավորումներ, ներդրումներ կատարել այդպիսի հիմնավորումներ վերհանելու համար.
- Աշխատել կալանքին այլընտրանքներով զբաղվող ամենահամապատասխան շահագրգիռ կողմերի հետ.
- Քարտեզագրել շահագրգիռ կողմերի կարողությունները՝ նրանց հետ կալանքին այլընտրանքների ծրագրերում համագործակցելու համար.
- Անցկացնել վերապատրաստումներ. կազմել աշխատանքային խմբեր և կալանքի այլընտրանքներին առնչվող կարողությունների ստեղծման այլ միջոցառումներ.
- Կազմակերպել կամ իրականացնել վերապատրաստումներ՝ կալանքի այլընտրանքներում ընդգրկված խնամողների և անհատական դեպքերի հետ աշխատողների համար.
- Բարձրացնել իրազեկությունը՝ կալանքին այլընտրանքների կիրառության վերաբերյալ լրատվական քարոզարշավների, քաղաքացիական հասարակությանը տեղեկացնելու, սեմինարների և ակադեմիական միջոցառումների միջոցով.
- Կառավարության մարմինների համար մշակել կալանքին այլընտրանքների ուղենիշներ/ ստանդարտ գործելակերպի ընթացակարգեր.
- Աջակցել փորձնական ծրագրերի, ապաստանի և այլ համայնքային ընդունման այլընտրանքների առաջարկների մշակման աշխատանքներին, ներառելով ֆինանսական միջոցների հավաքման հնարավորությունները:
- Աջակցել փորձնական ծրագրերի առաջարկների մշակմանը, կացարանների և այլ համայնքային ընդունման այլընտրանքներին, ներառյալ՝ ֆինանսական միջոցների հավաքման հնարավորություններին:

Նպատակ 3. Ապահովել կալանքի պայմանների համապատասխանությունը միջազգային չափանիշներին, եթե կալանավորումն անհրաժեշտ է և անխուսափելի

Հետամուտ լինելով Նպատակ 3-ին, գրասենյակներն ու գործընկերները պետք է հաշվի առնեն ՄԱԿՓԳՀ,*«Ուղենիշներ ապաստան հայցողների կալանքի կիրառելի չափանիշների ու չափորոշիչների և կալանքին այլընտրանքների վերաբերյալ»* և ՄԱԿՓԳՀ, Կտտանքների կանխման միություն (ԿԿՄ),Կալանքի միջազգային դաշինք (ԿՄԴ)՝ «*Ներգաղթածների կալանավայրերի մշտադիտարկումը. գործնական ձեռնարկ»*[33]:

Ի՞նչին անդրադառնալ:

Ենթանպատակները կամ խնդիրները պետք է ներառեն հետևյալը.

1 Կալանքի վերաբերյալ օրենսդրությունը և քաղաքականությունը համապատասխանում են միջազգային չափանիշներին, և մասնավորապես, ՄԱԿՓԳՀ-ին և այլ ազգային ու միջազգային մշտադիտարկող անկախ մարմինների թույլ են տալիս մուտք գործել ներգաղթածների կալանքին այլընտրանքային վայրեր.

2 Գործնականում ՄԱԿՓԳՀ-ին և այլ ազգային ու միջազգային մշտադիտարկող անկախ մարմիններին թույլատրվում է մուտք գործել ներգաղթածների կալանավայրեր՝ կանոնավոր մշտադիտարկում կատարելու համար.

3 Ներգաղթածների կալանավայրերի համար պատասխանատու մարմինները **տեղյակ են կալանքի պայմանների և կալանավորների հետ վարմունքի միջազգային չափանիշներին և կիրառում են դրանք.**

4 Կալանավորների հետ վարվում են մարդկային ու արժանապատիվ ձևով՝ այդ միջազգային չափանիշներին համապատասխան.

5 Հատուկ միջոցներ են ձեռնարկվում խոցելի կամ ռիսկային վիճակում գտնվող մարդկանց կարիքները հոգալու համար:

Ի՞նչ գործողություններ կարելի է ձեռնարկել

---

[33]ՄԱԿՓԳՀ, «Ուղենիշներ ապաստան հայցողների կալանքի կիրառելի չափանիշների ու չափորոշիչների և կալանքին այլընտրանքների վերաբերյալ», 2012թ. տես՝ http://www.refworld.org/docid/503489533b8.html և ՄԱԿՓԳՀ, Կտտանքների կանխարգելման միություն (ԿԿՄ) և Կալանքի միջազգային դաշինք (ԿՄԴ), Ներգաղթածների կալանքի մշտադիտարկում. գործնական ձեռնարկ, 2014թ., տես՝ http://www.refworld.org/docid/53706e354.html

- Քարտեզագրել ներգաղթածների կալանավայրերը և ծանոթանալ կալանավայրերի պատասխանատու մարմիններին.
- Երկխոսություն սկսել իշխանությունների հետ՝ ՄԱԿՓԳՀ-ի մանդատի և վերահսկիչ դերի մասին, ներգաղթածների կալանավայրեր մուտքն ապահովելու համար.
- Ճանաչել և համագործակցել երկրում առկա շահագրգիռ կողմերի հետ, որոնք մանդատ ունեն ներգաղթածների կալանավայրեր մուտք գործելու համար.
- Մշակել նույնականացման և ուղղորդման մեխանիզմներ, որպեսզի ՄԱԿՓԳՀ-ն կարողանա տեղեկանալ խնդրո առարկա կալանավորված անձանց մասին.
- Ձեռնարկել, օժանդակել կամ խթանել կալանքի պայմաններին նվիրված հետազոտություններ.
- Մշակել կալանքի մշտադիտարկման ծրագիր.
- Բարձրացնել իրազեկությունը կալանքի պայմանների վերաբերյալ՝ ազգային, տարածաշրջանային և/կամ միջազգային մակարդակներում.
- Մշակել քարոզչական միջամտություններ՝ վեր հանված հիմնական մարտահրավերները հաղթահարելու համար.
- Սահմանել և օժանդակել կալանքի պայմանների բարելավմանն ուղղված նախաձեռնություններ, համակարգելով համապատասխան շահագրգիռ կողմերի հետ[34].
- Աջակցել կալանավայրերի աշխատակիցների վերապատրաստումներին՝ նվիրված փախստականների իրավունքներին և խոցելի կամ ռիսկային վիճակում գտնվող անձանց հատուկ կարիքներին.
- Աջակցել մշտադիտարման մեթոդների վերաբերյալ այլ շահագրգիռ կողմերի վերապատրաստումներին։

Հավելված

Առկա գործիքներն ու նյութերը

Կալանքի և կալանքին այլընտրանքների գործունեության մասին տեղեկացնելու և այն ուղղորդելու համար ՄԱԿՓԳՀ-ն և նրա գործընկերները մշակել են մի շարք գործիքներ և

[34]Այս նախաձեռնությունների թիվն ու չափը տարբեր են՝ համատեքստից կախված, և կարող են ներառել կալանավորներին իրավաբանական օգնության տրամադրում, կալանքին այլընտրանքների խթանում, միջազգային չափանիշների վերաբերյալ վերապատրաստումներ կալանքի կենտրոնի աշխատակիցների համար, բացառության կարգով՝ նյութական օգնության տրամադրում խոցելի կամ ռիսկային վիճակում գտնվող անձանց, համապատասխան իշխանություններին վարմունքի և կալանքի պայմանների վերաբերյալ վերհանած փաստերի և բացերի վերաբերյալ զեկույցների տրամադրում և աշխատանք կառավարությունների հետ՝ կալանքի ռեժիմի թերությունները հաղթահարելու համար։

ուղենիշներ: Ստորև ներկայացված ցանկում տրված է դրանց որոշ մասը: Կարդացեք նաև կալանքի վերաբերյալ *Refworld's Special Features էջը:*

ՄԱԿՓԳՀ, «Ուղենիշներ ապաստան հայցողների կալանքի կիրառելի չափանիշների ու չափորոշիչների և կալանքին այլընտրանքների վերաբերյալ» և ՄԱԿՓԳՀ, Կտտանքների կանխարգելման միություն, Կալանքի միջազգային դաշինք՝ «Ներգաղթածների կալանավայրերի մշտադիտարկումը. գործնական ձեռնարկ»

- ✓ UNHCR, Guidelines on the Applicable Criteria and Standards relating to the Detention of Asylum-Seekers and Alternatives to Detention, 2012, տես՝http://www.refworld.org/docid/503489533b8.html
- ✓ UNHCR, Association for the Prevention of Torture (APT) and the International Detention Coalition (IDC), Monitoring Immigration Detention: Practical Manual, 2014, տես՝http://www.refworld.org/docid/53706e354.html
- ✓ UNHCR, Memorandum of Understanding between the International Detention Coalition and The Office of the United Nations High Commissioner for Refugees, 13 June 2013, տես՝http://www.refworld.org/docid/51b86f344.html
- ✓ UNHCR, Global Roundtable on Alternatives to Detention of Asylum-Seekers, Refugees, Migrants and Stateless Persons: Summary Conclusions, July 2011, տես՝http://www.refworld.org/docid/4e315b882.html
- ✓ UNHCR, Protection Training Manual for European Border and Entry Officials, 1 April 2011,տես՝http://www.refworld.org/docid/4ddf40d12.html
- ✓ UNHCR, Framework for the Protection of Children, 26 June 2012,տես՝http://www.refworld.org/docid/4fe875682.html
- ✓ Back to Basics: The Right to Liberty and Security of Person and 'Alternatives to Detention' of Refugees, Asylum-Seekers, Stateless Persons and Other Migrants, by Alice Edwards, April 2011, PPLA/2011/01. Rev.1, տես՝http://www.refworld.org/docid/4dc935fd2.html
- ✓ Building Empirical Research into Alternatives to Detention: Perceptions of Asylum-Seekers and Refugees in Toronto and Geneva, by Cathryn Costello and Esra Kaytaz, June 2013, PPLA/2013/02, տես՝http://www.refworld.org/docid/51a6fec84.html
- ✓ IDC, There are Alternatives: A handbook for preventing unnecessary immigration detention, 13 May 2011, ISBN 978-0-9871129-1-0, տես՝http://www.refworld.org/docid/4f0c14252.html
- ✓ IDC, Captured Childhood: Introducing a new model to ensure the rights and liberty of refugee, asylum seeker and Irregular migrant children affected by Immigration detention, 2012, տես՝http://www.refworld.org/docid/510a604c2.html
- ✓ IDC, Toolkit for Legal Providers Working with Refugees and Asylum Seekers in Places of Detention, 8 December 2009, տես՝http://goo.gl/Q2TVOV
- ✓ APT and the Parliamentary Assembly of the Council of Europe (CoE), Visiting Immigration Detention Centres: A Guide for Parliamentarians, September 2013, տես

- ✓ http://goo.gl/pWE8Xy

Այս ռազմավարության էլեկտրոնային տարբերակը կարող եք տեսնել՝ www.refworld.org/detention.html